ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» 12 2023թ. N 104 - Լ

ԵՐԵՎԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՎԱԿՆՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԿՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջների համաձայն Ազգային անվտանգության մարմինների ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման գործընթացն ապահովելու նպատակով, հիմք ընդունելով Որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի N 860-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Ծրագրի իրականացման գործընթացն ապահովող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

2 Հաստատել՝

1) Հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) Հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի,

3) Ծրագրի շրջանակներում վարկավորման հավակնող ծառայողների վիճակահանության (այսուհետ՝ Վիճակահանություն) անցկացման կարգը՝ համաձայն հավելված N 3-ի:

4) Ծրագրին մասնակցելու նպատակով ներկայացվող դիմում-հայտի ձևը՝ համաձայն հավելված N 4-ի,

5) Ծրագրի լրացուցիչ երաշխիքներից օգտվելու դիմումների ձևերը՝ համաձայն հավելված N 5-ի և հավելված N 6-ի,

6) Ծրագրի մասնակիցների ռեեստրի ձևը՝ համաձայն հավելված N 7-ի,

7) Ծրագրի շրջանակներում համագործակցող վարկատու կազմակերպություն ներկայացվող տեղեկանքների ձևերը՝ համաձայն հավելված N 8-ի և հավելված N 9-ի:

3. Ծրագրի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանում նշանակել Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) տնտեսական վարչությանը:

4. ԱԱԾ տնտեսական վարչության պետին՝

1) ապահովել Վիճակահանության անցկացման և Ծրագրի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված գործառույթների պատշաճ և ժամանակին իրականացումը՝ համագործակցելով ԱԱԾ կառուցվածքային ստորաբաժանումների հետ,

2) նշանակել Վիճակահանության անցկացման պատասխանատու անձ՝ ԱԱԾ տնտեսական վարչության պետի տեղակալի կամ բաժնի պետի մակարդակով:

5. Սահմանել, որ յուրաքանչյուր տարվա համար Ծրագրին մասնակցելու նպատակով դիմում-հայտերի ներկայացման ժամկետ է սահմանվում հունվար, փետրվար, մարտ ամիսները:

6. ԱԱԾ ֆինանսական վարչության պետին՝ ապահովել Ծրագրին մասնակցելու ցանկություն հայտնած Ծառայողներին սույն հրամանի N 9 հավելվածով նախատեսված տեղեկանքի տրամադրումը:

7. ԱԱԾ կենտրոնական մարմինների, Երևանի քաղաքային և մարզային վարչությունների պետերին՝ ապահովել ենթակա անձնակազմի կողմից Ծրագրի և սույն հրամանի պահանջներին համապատասխան՝ Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման և Ծրագրի շրջանակներում անցկացվող վիճակահանությանն անարգել մասնակցության գործընթացը:

8. Հրամանը ծանոթացնել Ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալներին, կենտրոնական մարմինների, Երևանի քաղաքային և մարզային վարչությունների պետերին և նրանց ենթակա անձնակազմին:

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ **Ա. ԱԲԱՋՅԱՆ**

Հավելված N 1

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արամ Հակոբյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ՝ (Հանձնաժողովի նախագահ),
Վարդան Ֆարսյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական վարչության պետ (Հանձնաժողովի նախագահի տեղակալ)
Գարեգին Մկրտչյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության ֆինանսական վարչության պետ,
Նելլիկ Մանանդյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության իրավաբանական վարչության պետ,
Ռաֆայել Առաքելյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներքին անվտանգության վարչության պետ,
Արթուր Բախշյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության կադրերի վարչության պետի տեղակալ,
Արամ Դաղեստանյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի հրամանատարի նյութատեխնիկական ապահովման գծով տեղակալի պժկ,
Ռաֆայել Գալստյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի կրտսեր տեսուչ,
Վլադ Խաչիկյան	ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնտեսական վարչության պետի խորհրդական (Հանձնաժողովի քարտուղար):

Հավելված N 2

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Ազգային անվտանգության մարմինների ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման գործընթացն ապահովող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի իրականացման գործընթացի հետ կապված հարցերը քննարկելիս Հանձնաժողովը ղեկավարվում է Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովի գործունեության նպատակն է Ազգային անվտանգության մարմիններում Ծրագրի իրականացման գործընթացի ապահովումը:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովը՝

1) ստուգում է Ծառայողի կողմից Ծրագրին մասնակցելու նպատակով ԱԱԾ տնօրենին ներկայացրած դիմում-հայտը և դրան կից փաստաթղթերի համապատասխանությունը Որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետին,

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված ստուգման արդյունքներով կազմում է Հանձնաժողովի եզրակացություն (Ձև) (այսուհետ՝ Եզրակացություն)՝ Ծառայողի՝ սույն հրամանի 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված վիճակահանությանը (այսուհետ՝ Վիճակահանություն) մասնակցության հարցի լուծման վերաբերյալ,

3) վերահսկում է Վիճակահանության անցկացումը,

4) ուսումնասիրում է Որոշմամբ և սույն հրամանով սահմանված՝ Վիճակահանության անցկացման կանոնների խախտումների վերաբերյալ արձանագրությունները և խախտման փաստի առկայության կամ բացակայության մասին կազմում եզրակացություն:

5. Որոշմամբ նախատեսված փաստաթղթերը Հանձնաժողովին թերի ներկայացվելու դեպքում, Հանձնաժողովի քարտուղարի կողմից Ծառայողին գրավոր ներկայացվում է բացակայող փաստաթղթերի ցանկը, շտկման ենթակա բացթողումները, և առաջարկվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները: Նշված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Ծառայողի՝ Ծրագրին մասնակցելու հարցը Հանձնաժողովը քննարկում է ներկայացված փաստաթղթերի շրջանակներում և դրանց հիման վրա կայացնում է համապատասխան եզրակացություն:

6. Հանձնաժողովն իրավասու է պահանջել Ծրագրին վերաբերող և ԱԱԾ տնտեսական վարչությունում առկա փաստաթղթեր, նյութեր, Վիճակահանության տեսաձայնագրություններ և այլ փաստաթղթեր:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի գումարման միջոցով, որոնք հրավիրվում են Հանձնաժողովի նախագահի կողմից:

8. Հանձնաժողովի նիստերը գումարվում են՝

1) ըստ անհրաժեշտության, այդ թվում՝ յուրաքանչյուր Վիճակահանության անցկացումից անմիջապես հետո՝ Վիճակահանության արդյունքներով համապատասխան որոշում կայացնելու համար,

2) լրացուցիչ, այդ թվում՝ Վիճակահանության տեսագրությունը, փաստաթղթեր և այլ նյութեր ուսումնասիրելու անհրաժեշտության դեպքում, Վիճակահանության անցկացման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

9. Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի նիստի վայրի, օրվա և ժամի մասին Հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է նիստից առնվազն 3 օր առաջ:

10. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են Հանձնաժողովի անդամների 2/3 մասնակցության դեպքում:

11. Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալը:

12. Հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել Ծրագրին մասնակցելու նպատակով դիմում-հայտ ներկայացրած Ծառայողները, Վիճակահանությանը Ծառայողի փոխարեն մասնակցող նրա ընտանիքի անդամը կամ լիազորված անձը, ԱԱԾ համապատասխան մարմինների պետերը, Վիճակահանության անցկացման վայրում գտնվելու իրավունք ունեցող այլ անձինք, համագործակցող վարկատու կազմակերպության ներկայացուցիչները և այլն: Հրավիրված անձինք նիստերին կարող են մասնակցել միայն հարցերի քննարկմանը՝ իրենց վերաբերելի մասով:

13. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցող Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

14. Հանձնաժողովի գործառույթներին վերաբերող հարցերի շուրջ Հանձնաժողովի կողմից կայացվում է որոշում, որի հիման վրա կազմվում է եզրակացություն:

15. Եզրակացության մեջ նշվում են նիստի անցկացման օրը, Հանձնաժողովի շրջանակներում քննարկված հարցի բովանդակությունը, Հանձնաժողովի կայացրած որոշումն ու Հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքները (առկայության դեպքում):

16. Հանձնաժողովի եզրակացությունը ստորագրում են Հանձնաժողովի անդամները, քարտուղարը, հաստատում՝ Հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի՝ հատուկ կարծիք ունեցող անդամները ստորագրում են եզրակացությունը՝ ստորագրությանը կից գրառելով «հատուկ կարծիքը կցվում է» բառերը, միաժամանակ եզրակացությանը կցելով հատուկ կարծիքը:

17. Հանձնաժողովի կողմից Ծառայողի՝ Վիճակահանությանը մասնակցելու վերաբերյալ դրական եզրակացության կազմման դեպքում Ծառայողի ներկայացրած փաստաթղթերը գրությամբ ուղարկվում են ԱԱԾ տնտեսական վարչություն՝ հետագա ընթացքն ու պահպանումն ապահովելու համար: Հանձնաժողովի դրական եզրակացության մեկ օրինակը պահվում է Ծառայողի անձնական գործում:

18. Հանձնաժողովի կողմից Ծառայողի՝ Վիճակահանությանը մասնակցելու վերաբերյալ բացասական եզրակացության մասին Հանձնաժողովը տեղեկացնում է տվյալ Ծառայողին (նրա ընտանիքի անդամին կամ լիազորված անձին) հերթական նիստի ժամանակ, պարզաբանելով կայացված որոշման հիմքերն ու պատճառները: Բացասական եզրակացության դեպքում Ծառայողի ներկայացրած փաստաթղթերը Հանձնաժողովի քարտուղարը վերադարձնում է Ծառայողին, իսկ եզրակացությունը՝ ստորագրությամբ ծանոթացնում է Ծառայողին: Հանձնաժողովի բացասական եզրակացության մեկ օրինակը պահվում է Ծառայողի անձնական գործում:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

19. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները,

2) հրավիրում է Հանձնաժողովի նիստերը և վարում դրանք,

3) հսկողություն է իրականացնում Հանձնաժողովի աշխատանքների նկատմամբ,

4) իր բացակայության դեպքում հանձնարարում է Հանձնաժողովի նախագահի տեղակալին վարել Հանձնաժողովի նիստերը,

5) որոշում է Հանձնաժողովի նիստի հետ կապված հարցերի և զեկուցագրերի քննարկման հերթականությունը,

6) հաստատում է Հանձնաժողովի եզրակացությունը,

7) Հանձնաժողովի նիստերին հրավիրված անձանց տալիս է հարցեր,

8) լրացուցիչ ուսումնասիրման անհրաժեշտության դեպքում Վիճակահանության պատասխանատուից պահանջում է Վիճակահանության տեսագրությունը, փաստաթղթեր և այլ նյութեր,

9) իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԸ

20. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին,

2) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ վարում է Հանձնաժողովի նիստերը,

3) Հանձնաժողովի նիստերին հրավիրված անձանց տալիս է հարցեր,

4) ծանոթանում է Հանձնաժողովի նիստի արդյունքում կազմված եզրակացությունների բովանդակություններին,

5) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արդյունքով կազմված եզրակացությունները, հատուկ կարծիք ունենալու դեպքում սույն աշխատակարգի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված կարգով հայտնում դրա մասին, իսկ հատուկ կարծիքը կցում եզրակացությանը,

6) ներկա է գտնվում Վիճակահանության անցկացման վայրում,

7) միջնորդում է Հանձնաժողովի նախագահին Վիճակահանության պատասխանատուից պահանջել Վիճակահանության տեսագրությունը, փաստաթղթեր և այլ նյութեր՝ լրացուցիչ ուսումնասիրման նպատակով,

8) իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ,

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

21. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին,

2) Հանձնաժողովի նիստերին հրավիրված անձանց կարող է տալ հարցեր,

3) ծանոթանում է Հանձնաժողովի նիստի արդյունքում կազմված եզրակացությունների բովանդակություններին,

4) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արդյունքով կազմված եզրակացությունները, հատուկ կարծիք ունենալու դեպքում սույն աշխատակարգի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված կարգով հայտնում դրա մասին, իսկ հատուկ կարծիքը կցում եզրակացությանը,

5) ներկա է գտնվում Վիճակահանության անցկացման վայրում,

6) Հանձնաժողովի նիստին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում, այդ մասին տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին,

7) միջնորդում է Հանձնաժողովի նախագահին Վիճակահանության պատասխանատուից պահանջել Վիճակահանության տեսագրությունը, փաստաթղթեր և այլ նյութեր՝ լրացուցիչ ուսումնասիրման նպատակով,

8) իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

22. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է Հանձնաժողովի նիստերը,

2) ստուգում է Հանձնաժողով ստացված Փաստաթղթերը, դրանց համապատասխանությունը Որոշման պահանջներին: Փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում սույն աշխատակարգի 5-րդ կետով սահմանված կարգով տեղեկացնում է Ծառայողին սահմանված փաստաթղթերը լրացնելու անհրաժեշտության մասին,

3) կազմում է Հանձնաժողովի եզրակացությունները և ստորագրում դրանք,

4) Հանձնաժողովի եզրակացության մասին տեղեկացնում է համապատասխան Ծառայողին,

5) ներկա է գտնվում Վիճակահանության անցկացման վայրում,

6) Հանձնաժողովի ուսումնասիրությանը ներկայացնում է Վիճակահանության պատասխանատու կողմից իրեն փոխանցված, ինչպես նաև Վիճակահանության հետ կապված իր կողմից կազմված արձանագրությունները,

7) անդամներին տեղեկացնում է Հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, ժամանակի և քննարկվող հարցերի մասին՝ նիստից 3 օր առաջ,

8) իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

Հավելված N 3

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

ԿԱՐԳ
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՎԱԿՆՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջների համաձայն Ազգային անվտանգության մարմինների ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում վարկավորման հավակնող ծառայողների վիճակահանության (այսուհետ՝ Վիճակահանություն) անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. ԱԱԾ տնտեսական վարչությունը յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսվա յոթերորդ աշխատանքային օրը Վիճակահանության վայրի, օրվա և ժամի մասին գրավոր տեղեկացնում է ԱԱԾ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին, որոնց Ծառայողները մասնակցելու են Վիճակահանությանը:

3. Վիճակահանության ընթացքը՝ ներառյալ սույն կարգի 10-րդ կետով նախատեսված գործողությունը տեսաձայնագրվում է: Տեսաձայնագրության կրիչներն ու Վիճակահանության հետ կապված փաստաթղթերը պահվում են ԱԱԾ տնտեսական վարչությունում:

4. Վիճակահանության անցկացման վայրում ներկա են գտնվում՝

1) սույն հրամանի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն նշանակված՝ վիճակահանության պատասխանատու անձը (այսուհետ՝ Պատասխանատու),

2) սույն Կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված, ինչպես նաև Պատասխանատուի ցուցումով Վիճակահանության կազմակերպումն ու անցկացումն ապահովելու ուղղությամբ այլ գործառույթներ ունեցող ԱԱԾ տնտեսական վարչության սահմանափակ թվով աշխատակիցներ,

3) սույն հրամանի 1-ին կետով նախատեսված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

5. Վիճակահանությանը մասնակցելու նպատակով Վիճականահության վայր թույլատրվում է մուտք գործել Վիճակահանությանը մասնակցող Ծառայողներին, իսկ Ծառայողի մասնակցության անհնարինության դեպքում՝ նրա ընտանիքի մեկ անդամի կամ նրա կողմից լիազորված մեկ անձի (մուտքի համար ներկայացվում է անձը հաստատող փաստաթուղթ և լիազորագիր):

6. Վիճակահանությունն իրականացվում է երկու թմբուկների միջոցով, որոնցից մեկում (այսուհետ՝ 1-ին թմբուկ) ծալված վիճակում լցվում են Վիճակահանությանը մասնակցող Ծառայողների քանակին համապատասխանող և նրանց անունը, հայրանունը և ազգանունը, ռեեստրում դիմում-հայտի գրանցման համարը պարունակող թերթիկները, իսկ մյուս թմբուկում (այսուհետ՝ 2-րդ թմբուկ) լցվում են Վիճակահանությանը մասնակցող Ծառայողների քանակին համապատասխանող, ծալված և ԱԱԾ տնտեսական վարչության կնիքով կնքված թերթիկներ, որոնցում «Վ» տառի նշումով՝ թերթիկների քանակը պետք է համապատասխանի տվյալ տարվա համար սահմանված վարկավորման տեղերի քանակից (40 տեղ) Վիճակահանությանը

չմասնակցելու (նախապատվության) իրավունք ունեցող (*որպես բնակարանային պայմանների կարիքավոր հաշվառված, ինչպես նաև դիմում-հայտի տրման օրվան նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում ռազմաուսումնական հաստատություն ավարտած*) և ծրագրին մասնակցելու համար դիմում-հայտ ներկայացրած ու հաշվառված զինծառայողների քանակի միջև տարբերության արդյունքում ստացվող վարկավորման տեղերի թվին, իսկ մնացած թերթիկները պետք է լինեն առանց որևէ նշման: Երկու թմբուկներում լցվող թերթիկները պետք է ծալված լինեն այնպես, որպեսզի դրանցում առկա գրառումները տեսանելի չլինեն:

7. 1-ին թմբուկից ԱԱԾ տնտեսական վարչության աշխատակցի կողմից պատահականության սկզբունքով հանվում է մեկ թերթիկ, բացվում է և բարձրաձայն կարդացվում է թերթիկում նշված անունը, ազգանունը և հայրանունը, որի հիման վրա համապատասխան Ծառայողը մոտենում է 2-րդ թմբուկին և հանում մեկ թերթիկ, բացում է թերթիկը և բարձրաձայն տեղեկացնում թերթիկի բովանդակության մասին:

8. 1-ին թմբուկից և 2-րդ թմբուկից հանված թերթիկները հանձնվում են Վիճակահանության արդյունքները գրանցող ԱԱԾ տնտեսական վարչության աշխատակցին, որը համապատասխան տվյալները գրանցում է ռեեստրում տվյալ Ծառայողի գրանցման տողի 9-րդ սյունակում: Առանց նշման թերթիկ հանելու տեղեկատվությունը ևս գրանցվում է ռեեստրում տվյալ Ծառայողի գրանցման տողի 9-րդ սյունակում:

9. Վիճակահանությունը շարունակվում է մինչև այն պահը, երբ սույն կարգի 8-րդ կետի համաձայն ռեեստրում գրանցում կատարող ԱԱԾ տնտեսական վարչության աշխատակցի կողմից հայտարարվում է, որ «Վ» տառի նշումով բոլոր թերթիկները հանվել են: Այս դեպքում Վիճակահանությունը դադարեցվում է, երկու թմբուկներից հանվում են բոլոր թերթիկները, արձանագրվում է յուրաքանչյուր թմբուկից հանված թերթիկների քանակը, որոնք պարտադիր պետք է լինեն նույն քանակով, այնուհետև՝ երկու թմբուկներից հանված թերթիկները բացվում են, 1-ին թմբուկից հանված բոլոր թերթիկները բարձրաձայն կարդացվում են, որի հիման վրա համապատասխան նշումներ են կատարվում ռեեստրում յուրաքանչյուր ծառայողի գրանցման տողի 9-րդ սյունակում:

10. Վիճակահանությունը սկսելուց առաջ Պատասխանատուն Հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում է 1-ին թմբուկում և 2-րդ թմբուկում (այսուհետ՝ թմբուկներ) առկա թերթիկների համապատասխանությունը սույն կարգի 6-րդ կետով նախատեսված պայմաններին: Համապատասխանությունը հավաստվելուց հետո Վիճակահանությունը Պատասխանատուի կողմից հայտարարվում է մեկնարկած:

11. Սույն կարգի 10-րդ կետի համաձայն իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերված անհամապատասխանության դեպքում Պատասխանատուն անհապաղ միջոցներ է ձեռնարկում դրանք շտկելու ուղղությամբ, իսկ Հանձնաժողովի քարտուղարն սույն կետով նախատեսված գործողությունների արդյունքների մասին կազմում է արձանագրություն և ներկայացնում է Հանձնաժողովի ուսումնասիրությանը:

12. Սույն կարգի 11-րդ կետով նախատեսված դեպքում Վիճակահանությունը Պատասխանատուի կողմից հայտարարվում է մեկնարկած նշված անհամապատասխանությունները վերացնելուց հետո միայն:

13. Վիճակահանության ընթացքում յուրաքանչյուր մոտեցման ժամանակ թմբուկից մեկից ավելի թերթիկ հանվելու դեպքում կամ սույն կարգի 7-րդ կետով նախատեսված այլ պահանջների խախտմամբ թերթիկներ հանվելու դեպքում Պատասխանատուն անհապաղ կասեցնում է Վիճակահանությունը: Հանված թերթիկները համարվում են անվավեր և Պատասխանատուի կողմից կազմում է արձանագրություն (ազատ ոճի) ու փոխանցում է Հանձնաժողովի քարտուղարին՝ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելու նպատակով:

14. Սույն կարգի 13-րդ կետով նախատեսված դեպքում թմբուկից հանված չբացված ու չվնասված թերթիկը Պատասխանատուի ցուցումով կրկին նետվում է թմբուկի մեջ, իսկ թմբուկից հանված բացված կամ վնասված թերթիկը համարվում է անվավեր ու փոխարինվում է նույն անվամբ և բովանդակությամբ նոր թերթիկով, ինչից հետո միայն Պատասխանատուն վերսկսում է Վիճակահանությունը:

15. Թմբուկից թերթիկ հանող անձի կողմից Վիճակահանության ընթացքում թմբուկի մեջ կողմնակի թերթիկ(ներ) նետվելու դեպքում Պատասխանատուն անհապաղ կասեցնում է Վիճակահանությունը, այնուհետև Հանձնաժողովի անդամների ներկայությամբ ապահովում է տվյալ թմբուկի համար նախատեսված թերթիկների համապատասխանությունը սույն կարգի 6-րդ կետին, վերսկսում է Վիճակահանությունը և կազմում է արձանագրություն (ազատ ոճի) ու փոխանցում է Հանձնաժողովի քարտուղարին՝ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելու նպատակով:

16. Մինչև սույն կարգի 15-րդ կետով նախատեսված դեպքի տեղի ունենալը թմբուկից սահմանված կարգով հանված թերթիկները համարվում են վավեր:

17. Սույն կարգի 13-րդ և 15-րդ կետերով նախատեսված գործողություններն առերևույթ միտումնավոր կերպով կատարած անձի մասնակցությունը Վիճակահանությանը Պատասխանատու կողմից կասեցվում է, կազմվում է արձանագրություն (ազատ ոճի) և փոխանցվում է Հանձնաժողովի քարտուղարին՝ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելու և համապատասխան որոշում կայացնելու նպատակով:

18. Սույն կարգի 9-րդ կետով նախատեսված՝ յուրաքանչյուր թմբուկից հանված թերթիկների քանակի անհամապատասխանության հայտաբերման դեպքում Պատասխանատուի կողմից անմիջապես կազմվում է արձանագրություն (ազատ ոճի) և փոխանցվում է Հանձնաժողովի քարտուղարին՝ Հանձնաժողովի կողմից Վիճակահանության արդյունքների վավերության հարցը լուծելու նպատակով:

19. Սույն կարգով նախատեսված դեպքերում կասեցված Վիճակահանությունն անհրաժեշտության դեպքում կարող է վերսկսվել մեկ այլ օր, ինչի մասի ԱԱԾ տնտեսական վարչությունը վերսկսվող Վիճակահանությունից 2 օր առաջ պետք է տեղեկացնի Վիճակահանության մասնակիցներին:

20. Վիճակահանության տեսաձայնագրությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունների արդյունքում Վիճակահանության ընթացքում Որոշմամբ և սույն կարգով սահմանված կանոնների խախտումներ հայտնաբերվելու դեպքում Վիճակահանության արդյունքները Հանձնաժողովի որոշմամբ կարող են ամբողջությամբ կամ մասամբ անվավեր ճանաչվել:

21. Պատասխանատուն ապահովում է Հանձնաժողովի կողմից հայցվող՝ Վիճակահանությանը վերաբերող նյութերի (այդ թվում՝ տեսաձայնագրության) տրամադրումը:

Հավելված N 4

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

Ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____-ին

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրին մասնակցության

1. Ես՝_____

_____

ստորաբաժանումը, զինվորական կոչումը

_____

_____

անունը, հայրանունը, ազգանունը

_____

_____

ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն

_____

_____

դիմումի տրման օրվան նախորդող 5 տարվա ընթացքում ռազմաուսումնական հաստատություն ավարտած լինելու դեպքում՝ ավարտելու տարեթիվը

ցանկանում եմ մասնակցել բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրին:

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) իմ և ընտանիքիս անդամների անձը և ազգակցական կապը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ …….. թերթից,

2) _____ -ի տեղեկանքը՝ ինձ (ներառյալ համավարկառուներին)

համագործակցող վարկատու կազմակերպության անվանումը

_____ հիփոթեքային վարկ տրամադրելու պատրաստակամության

թվերով և տառերով

մասին՝…. թերթից:

3. Հայտարարում եմ, որ՝

1) սույն դիմում-հայտը ներկայացնելու փաստը համարվում է օրենքով և վարկավորման ծրագրով քաղաքացիաիրավական հարաբերությունների՝ պետության առաջարկած պայմանների ընդունում իմ (համավարկառուների) կողմից,

2) սույն դիմում-հայտը ներկայացնելու փաստը հանդիսանում է օրենքով սահմանված բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքից հրաժարում իմ կողմից

(եթե զինծառայողը օրենքով սահմանված կարգով հաշվառվել է որպես օրենքով սահմանված բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունք ունեցող):

Դիմող՝ _____ «.....» _____ 20…թ.

ստորագրություն, կոչում, անուն, ազգանուն

Հավելված N 5

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

Ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____-ին

ԴԻՄՈՒՄ

բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրի լրացուցիչ երաշխիքներից օգտվելու

1. Ես՝

_____

զինվորական կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը

հանդիսանում եմ բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրի մասնակից՝

_____

կնքման օրը, ամիսը, տարին

կնքված հիփոթեքային վարկավորման պայմանագրի համաձայն և զինվորական ծառայությունից արձակվել եմ

_____

արձակման հիմքը՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կամ առողջական

_____

վիճակի պատճառով ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու

հիմքով և (կամ) ունեմ

_____,

հաշմանդամության խումբը կամ ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը

որը ստացել եմ _____ հետևանքով:

պատճառական կապը

Խնդրում եմ սահմանված չափով և ժամկետում մարել հիփոթեքային վարկի մայր գումարը, որը զինվորական ծառայությունից արձակվելու և (կամ) հաշմանդամ ճանաչվելու օրվա դրությամբ կազմում է _____ դրամ:

թվով և տառերով

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) իմ անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ ..... թերթից,

2) արձակման հրամանի և (կամ) հաշմանդամության զինվորական կենսաթոշակի վկայականի և հաշմանդամության պատճառական կապը հաստատող փորձաքննական եզրակացության պատճենները՝ ..... թերթից,

3) _____ -ի տեղեկանքը՝ զինվորական ծառայությունից

համագործակցող վարկատու կազմակերպության անվանումը

արձակվելու և (կամ) հաշմանդամ ճանաչվելու օրվա դրությամբ հիփոթեքային վարկի մայր գումարի չափի մասին՝ _____ թերթից:

թվերով և տառերով

Դիմող՝ _____ «.....» _____ 20…թ.

ստորագրություն, կոչում, անուն, ազգանուն

Հավելված N 6

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

Ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____-ին

ԴԻՄՈՒՄ

բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրի լրացուցիչ երաշխիքներից օգտվելու

1. Ես՝

_____

անունը, հայրանունը, ազգանունը

հանդիսանում եմ բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրի շրջանակում՝

_____

կնքման օրը, ամիսը, տարին

կնքված և

_____

պատճառական կապը

հետևանքով զոհված (մահացած)

_____

ծառայողի կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը

ընտանիքի անդամ: Խնդրում եմ սահմանված չափով և ժամկետում մարել հիփոթեքային վարկի մայր գումարը, որը զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ կազմում է _____ դրամ:

թվերով և տառերով

2. Դիմումին կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) իմ անձը և զոհված (մահացած) զինծառայողի հետ ազգակցական կապը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ ……. թերթից,

2) զինծառայողի զոհվելու (մահանալու) պատճառական կապը հաստատող փորձաքննական եզրակացության պատճենները՝ …… թերթից,

3) _____ -ի տեղեկանքը՝ զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա

բանկի անվանումը

դրությամբ հիփոթեքային վարկի մայր գումարի չափի մասին՝ …… թերթից:

Դիմող՝ _____ «.....» _____ 20...թ.

ստորագրություն, կոչում, անուն, ազգանուն

Հավելված N 7

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

ՌԵԵՍՏՐ
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆԸ ԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

Հ/Հ	Ազգային անվտանգության մարմինների ծառայողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին	Ծառայողի կոչումը և ստորաբաժանում, բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված լինելու դեպքում՝ հաշվառման օրը, ամիսը, տարին	Ըստ բնակության վայրի հաշվառման հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն	Զինծառայողի դիմում-հայտի ստացման օրը, ամիսը, տարին	Ծառայողի ընտանիքի համավարկառու հանդիսացող անդամի ազգանունը, անունը, հայրանունը, ազգակցական կապը	Բնակելի տուն կառուցելու դեպքում՝ տնամերձ կամ բնակելի կառուցապատման հողամասի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականի համարը և տրման օրը, ամիսը, տարին	Համագործակցող վարկատու կազմակերպությունից ստացված տեղեկանքում առկա վարկավորման չափը	Ծրագրում ընդգրկվելը (վիճակահանությամբ կամ առանց դրա)՝ ըստ յուրաքանչյուր տարվա համար սահմանված քանակի և կնքված վարկավորման պայմանագրի վերաբերյալ տվյալները	Դիմում-հայտի տրման օրվան նախորդող 5 տարվա ընթացքում ռազմաուսումնական հաստատություն ավարտած լինելու դեպքում՝ ավարտելու տարեթիվը և դիպլոմի համարը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**
20... թվական									

Հավելված N 8

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրին մասնակցելու մասին

Տրվում է Ազգային անվտանգության մարմինների ծառայող

_____

զինվորական կոչումը,

_____

անունը, հայրանունը, ազգանունը

_____

ծննդյան օրը, ամիսը, տարին, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն

առ այն, որ վերջինս ցանկություն է հայտնել մասնակցելու Ազգային անվտանգության մարմինների ծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության _____ թվականի հիփոթեքային

տարեթիվը

վարկավորման ծրագրին, որի հիման վրա Ազգային անվտանգության ծառայությունը պատրաստակամ է Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշմամբ սահմանված պայմաններին համապատասխան իրականացնել ծառայողի հիփոթեքային վարկի կանխավճարի տրամադրումը և տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորումը, ինչպես նաև լրացուցիչ երաշխիքների շրջանակներում հիփոթեքային վարկի մայր գումարի մարումը:

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու

_____

համագործակցող վարկատու կազմակերպության անվանումը

Ազգային անվտանգության ծառայության
տնտեսական վարչության
պետ _____ «……» _____ 20….թ.:

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված N 9

ՀՀ ԱԱԾ տնօրենի

2023 թ. 12. 30-ի

N 104 - Լ հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրին մասնակցելու ցանկություն հայտնած ծառայողի վերաբերյալ

Հիփոթեքային վարկավորման ծրագրին մասնակցելու ցանկություն հայտնած Ազգային անվտանգության մարմինների ծառայողի տվյալները			
Անուն, Հայրանուն, Ազգանուն			
Ծննդյան օրը, ամիսը, տարին			
Անձը հաստատող փաստաթուղթ	N	Տրված է	Ում կողմից
Զինվորական կոչումը (տեղեկանքի տրման օրվա դրությամբ)			
Զինվորական ծառայության ստաժը (տեղեկանքի տրման օրվա դրությամբ)			
Դրամական ապահովության ամսական չափը			

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու

_____

համագործակցող վարկատու կազմակերպության անվանումը

Ազգային անվտանգության ծառայության
ֆինանսական վարչության
պետ _____ «……» _____ 20….թ.:

ստորագրություն, անուն, ազգանուն